ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/10507/02/24 ք. Երևան
11 Դեկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով, ըստ հայցի «Օպտիմում Գրուպ» ՍՊԸ-ի, «Զովեր Քնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվորներ) ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ թիվ A-51 AN ընթացակարգով գնման գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արձանագրություն կազմելու գործողությունն ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք «Զովեր քնսթրաքշն» ՍՊ ընկերության և «Օպտիմում գրուպ» ՍՊ ընկերության համատեղ գործունեության կարգով ներկայացրած հայտով ներկայացված հայտի գնի զեղչի կիրառմամբ գնային առաջարկը՝ 1.783.436.404 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսուներեք միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամն առաջարկված նվազագույն գին ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան

ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի՝ խնդրելով ոչ իրավաչափ ճանաչել թիվ A-51 AN ընթացակարգով գնման գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արձանագրություն կազմելու գործողությունը և որպես հետևանք «Զովեր քնսթրաքշն» ՍՊ ընկերության և «Օպտիմում գրուպ» ՍՊ ընկերության համատեղ գործունեության կարգով ներկայացրած հայտով ներկայացված հայտի գնի զեղչի կիրառմամբ գնային առաջարկը՝ 1.783.436.404 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսուներեք միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամը ճանաչել առաջարկված նվազագույն գին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 06.12.2024 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/10507/02/24 քաղաքացիական գործը, որը **մակագրվել** և **հասանելի է** դարձել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **06.12.2024 թվականին**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի <<բ>> ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ**

գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամից պահանջել «A-51 AN» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Օպտիմում Գրուպ» ՍՊԸ–ի, «Զովեր Քնսթրաքշն» ՍՊԸ–ի ընդդեմ «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի՝ թիվ A-51 AN ընթացակարգով գնման գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի բացման արձանագրություն կազմելու գործողությունն ոչ իրավաչափ ճանաչելու և որպես հետևանք «Զովեր քնսթրաքշն» ՍՊ ընկերության և «Օպտիմում գրուպ» ՍՊ ընկերության համատեղ գործունեության կարգով ներկայացրած հայտով ներկայացված հայտի գնի զեղչի կիրառմամբ գնային առաջարկը՝ 1.783.436.404 (մեկ միլիարդ յոթ հարյուր ութսուներեք միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար չորս հարյուր չորս) ՀՀ դրամն առաջարկված նվազագույն գին ճանաչելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
2. «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամից պահանջել դատարան ներկայացնել «A-51 AN» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am